ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

15 ՀՈՒՆԻՍԻ
2026 թ.
№ 10 (1165)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՆԵՐԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

«Սիրելի՛ ծնողներ, այսօր ձեր ներկայությունը շատ կարևոր է, որովհետև մանկությունը պաշտպանվում է ոչ միայն խոսքերով, այլ նաև ձեր ներկայությամբ և ուշադրությամբ, «ինչուիկ»-ներին անվերջ պատասխանելով»,-ասաց տոնական

միջոցառումը վարող մագիստրատուրայի ուսանողուհի Կարինե Ավալյանը: Դիմելով նաև ուսանողներին՝ նա ասաց. «Մանկավարժական համալսարանում երեխան տոնի միակ հերոսը չէ. նա մեր աշխատանքի, մեր առաքելության ու մեր պատասխանատվության կենտրոնում է». նա վստահեցրեց՝ նախաձեռնությունը վկայությունն է այն բանի, որ Մանկավարժական համալսարանը կրթության մասին խոսում է ոչ միայն լսարաններում, այլև իրական, կենդանի հանդիպումների միջոցով՝ երեխայի հետ, ընտանիքի հետ, հասարակության հետ:

Մանկավարժական համալսարանի Արհեստակցական կազմակերպությունը և Ուսանողական խորհուրդը հունիսի 1-ին՝ մակերպեցին հետաքրքիր մասնագիտական խաղեր՝ երեխաներին մատուցելով հաճելի անակնկալներ:

Օտար լեզուների ֆակուլտետի սեղանին անգլերեն և ռուսաց լեզվով նվեր գրքեր էին, որ պետք է նվիրեին փոքրիկներին խաղերի կազմակերպման արդյունքում, ապագա բանասերները հեքիաթ-խաղեր էին նախաձեռնել, միաժամանակ

Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, համալսարանի աշխատողների երեխաների համար կազմակերպել էին միջոցառում Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքի բակում, որտեղ փոքրիկների օրը վերածվեց իսկական տոնի՝ գունագեղ փուչիկներ, երգ, պար և 10 ֆակուլտետների տաղավարներ, որտեղ ուսանողները կազմակերպած ծառին փոքրիկները իրենց մատներով գունավորեցին ծառը, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ուսանողները երեք փուլով մասնագիտական խաղեր էին պատրաստել, Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ուսանողների նախաձեռնած լոգոպեդական խաղերը ուղղված էին երեխաների մանր մոտորիկայի զարգացմանը, ապագա հոգեբանները պատրաստել էին կոգնիտիվ խաղեր, կրեատիվության զարգացմանն ուղղված վարժություններ, նաև խաղ՝ երազանքների ծառ, Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողները խաղեր էին պատրաստել՝ ներառելով մայրենի և մաթեմատիկա առարկաները, Պատմության և հասարակագիտության ֆակուլտետն էլ հանդես էր եկել հետաքրքիր ծրագրով՝ խաղեր այբբենարանի տառերի թվային արժեքների հետ կապված, պատմական հայտնի դեմքերի նկարներ, որոնց անունները պետք է գուշակեին երեխաները, պատմությանը վերաբերող խաղ, որին փոքրիկները մասնակցեցին՝ կրելով թագավորական հանդերձանք:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի տաղավարը ներկայացրել էր «Մեր հեքիաթի գույները» ծրագիրը. տաղավարը զարդարված էր հեքիաթների նկարազարդումներով, որի հեղինակները դասախոսներն էին: Տաղավարում մոլբերտներ էին, թուղթ ու մատիտներ, որպեսզի երեխաները նկարեն իրենց մանկության սիրելի կամ էլ հորինած հեքիաթները:

Կուլտուրայի ֆակուլտետի ուսանողուհիները ներկայացրին հայկական պարերի

շարք, իսկ տղաները հանդես եկան գործիքային կատարումներով, որն էլ ամփոփվեց դասախոս Սևադա Շհոյանի կողմից սաքսոֆոնային երաժշտության մատուցմամբ:

Մանկությունը կյանքի ամենագեղեցիկ ու լուսավոր շրջանն է, և մեծերի պարտքն է՝ այն ավելի պաշտպանված ու գեղեցիկ դարձնել: Գեղեցիկ ու ջերմ միջավայրում մանուկներն իրենց զգացին ինչպես հեքիաթում՝ ինտերակտիվ խաղեր, նկարչություն, հանդիպում հեքիաթների հերոսների հետ, ճամփորդություն դեպի անցյալ ավագ ընկերների՝ ուսանողների հետ: Օրվա բոլոր գույները նրանցն էր, և նախաձեռնողները ջանք ու եռանդ չէին խնայել փոքրիկների օրը դարձնելու առավել վառ ու տոնական:

Սիլվա Ասրյան

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ ԷՐ ԱՄՆ-ՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆԸ

ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Նարեկ Մկրտչյանը հունիսի 4-ին հանդիպեց Մանկավարժական համալսարանի ուսանողների ու ֆակուլտետների ղեկավարների հետ:

Պատմական գիտությունների թեկնածու Նարեկ Մկրտչյանը ներկայացրեց իր գործունեությունն ու դերակատարությունը Հայաստան-ԱՄՆ համագործակցության տիրույթում, հանգամանորեն խոսեց ԹՐԻՓՓ ծրագրի մասին՝ վստահեցնելով, որ ԱՄՆ-Հայաստանի Հանրապետություն հարաբերությունները թևակոխել են նոր մակարդակ:

Դեսպան Նարեկ Մկրտչյանը ներկայացրեց Ամերիկայի հետ համագործակցության հնարավորություններն ու ուղղությունները, որոնք կարող են մեծ փոփոխություններ բերել տարբեր ոլորտներում և նպաստել մեր երկրի անվտանգությանը:

Հիմնականում զրույցը ծավալվեց համաշխարհային տեխնոլոգիական գլոբալ ցանցային շղթային միանալու և արհեստական բանականության ընձեռած հնարավորությունների համատեքստում մեր երկրի տեսլականի ու պատկերացումների շուրջ: Դեսպանը արհեստական բանականության ռիսկերի մասին խոսելիս կարևորեց նոր տեխնոլոգիաներին ուղեկցող մասնագետների անհրաժեշտությունը՝ փաստելով՝ կրթական գործընթացները զարգացնելու դինամիկան պայմանավորված է նոր տեխնոլոգիաների ճիշտ կիրառմամբ, և որ պետությունը պետք է ունենա ռազմավարություն՝ այս տեխնոլոգիաները կրթական պատֆորմին ուղղորդելու համար:

Դեսպանը պատասխանեց ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանի, դասախոսների և ուսանողների հարցերին, հակիրճ ներկայացրեց իր անցած ճանապարհը՝ պատմաբանից, դասախոսից մինչև ԱԺ պատգամավոր և Սոցիալական հարցերի նախարար:

Դիվանագիտության ոլորտում վերջինս անդրադարձավ երկու երկրների հարաբերություններում

Հայաստանի օրակարգային խնդիրները ներկայացնելու իր դերակատարությանը, կարևորեց մեր նախաձեռնողականությունը ԱՄՆ-ի հետ համագործակցության հարցում, իսկ ԱՄՆ-ում հայ համայնքի մասին խոսելիս կենտրոնացավ ինքնության հարցերի վրա, նաև ընդգծեց խորքային խնդիրների առկայությունը՝ շեշտելով, որ հայկական համայնքների հետ համագործակցությունը ՀՀ օրակարգերի ու քաղաքականությունների ներկայացման սահմաններում է, որի համատեքստում բոլոր ջանքերը պետք է ուղղորդել Հայաստանի զարգացմանը:

Հանդիպման ավարտին դեսպանն ուսանողներին ու ընդհանրապես երիտասարդությանը խորհուրդ տվեց կտրված չլինել աշխարհից, որովհետև ցանցային հասարակությունն այլևս իրականություն է, և հաղորդակցական հմտությունները զարգացնելու շնորհիվ միայն կարելի է համաշխարհային տեխնոլոգիական ցանցային համակարգերի մաս դառնալ և հաջողություններ ամրագրել:

Մեկնարկեց վերապատրաստման նոր փուլը

Մանկավարժական համալսարանում հունիսի 2-ին մեկնարկեց «Նախադպրոցական մանկավարժության, հոգեբանության և ուսումնամեթոդական հմտություններ» մոդուլով 20 կրեդիտով մանկավարժի հավաստագրման դասընթացը: Դասընթացը տևելու է մինչև օգոստոսի 10-ը: Վերապատրաստման 101 մասնակիցները Երևանից են և հանրապետության տարբեր մարզերից:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը

ողջունեց վերապատրաստվողներին և ընդգծեց, որ մեր երկիրը կրթության ոլորտում մեծ փոփոխությունների առաջ է կանգնած, որովհետև աշխարհն է արագ փոփոխվում, և մրցունակ լինելու համար պետք է պատրաստ լինել այդ փոփոխություններին: Ռեկտորի պաշտոնակատարը կարևորեց այս ոլորտի աշխատողների աշխատանքը, որովհետև նրանք գործ ունեն տարիքային մի խմբի երեխաների հետ, որոնց մոտ հենց այդ տարիքում ձևավորվում են արժեքներ ու դիրքորոշում:

Լիլիթ Մկրտչյանը խորհուրդ տվեց շատ լուրջ վերաբերվել վերապատրաստման գործընթացին և համալսարանից վերցնել ամեն հնարավորը. «Դա արդեն ձեզնից է կախված՝ որքան կկարողանաք վերցնել փոփոխությունները, իմացությունը, հմտությունը, գիտելիքը, արժեքն ու դիրքորոշումը, որպեսզի դրանք տեղափոխեք գործողությունների դաշտ և ձեր աշխատանքային միջավայրում կարողանաք հաջողել»:

Ռեկտորի պաշտոնակատարը կարևորեց համայնքների զարգացումը, նախադպրոցական ոլորտի աշխատողներին համարելով կարևոր մարդիկ, որոնք այս գործընթացները պետք է տեղափոխեն համայնքներ:

«Թող այս վերապատրաստման ամիսները ձեզ համար լինեն կրթատոն»,- ասաց Լիլիթ Մկրտչյանը՝ հավելելով՝ եթե մենք ուզում ենք հաջողել, ունենալ կայացած պետություն, այդ ամենը սկսվում է հենց Մանկավարժական համալսարանից:

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արմենուհի Մանուկյանը փաստեց՝ Մանկավարժական համալսարանը այն օրրանն է, որտեղ իրապես պատրաստվում են նվիրյալներ: Նա կարևորեց այս համագործակցությունը և վստահեցրեց՝ այս փուլի վերապատրաստվողները ևս կհամալրեն նախադպրոցական մանկավարժների բանակը և կլծվեն այդ ոլորտի մասնագետների նվիրյալ գործունեությանը:

Վերապատրաստվողներին ողջունեց նաև ամբիոնի և ոլորտի փորձառու մասնագետ Սվետա Մարությանը՝ վստահեցնելով՝ ձեր ակնկալիքներն անպայման կարդարանան և այս պատերի ներքո կավելանան սերն ու ջերմությունը ձեր մասնագիտության ու աշխատանքի հանդեպ:

Սիլվա Ասրյան

«Ամենակարևոր բաները դուք կարողացել էիք զգալ. ուսուցիչը, առաջին հերթին, պետք է արժեքներ ունենա, լինի բարեկիրթ: Եթե դուք նման ուսուցիչներ ունեք, ուրեմն երջանիկ եք».

Միդա Թոփուզյան

Գաղտնիք չէ, որ 21-րդ դարի ուսուցչի բնութագրումները տարբերվում են նախորդ դարի ուսուցչի բնութագրումներից. այսօր ուսուցիչը մտածելու մշակույթ ձևավորող է, ոչ միայն գիտելիք փոխանցող: Թեմայի վերաբերյալ հետաքրքիր էր լսել դպրոցականների կարծիքները, որն էլ Մանկավարժական համալսարանում մայիսի 26-ին ամփոփեցին ՀՊՄՀ Մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացված դպրոցականների հանրապետական և բուհի համահամալսարանական օլիմպիադաների շրջանակում:

Նշենք, որ երեք փուլով ամեն տարի անցկացվող դպրոցականների օլիմպիադային այս տարի մասնակցել է տարբեր դպրոցների 30 իններորդցի աշակերտ, որոնց ըստ փուլերի հանձնարարվել է՝ դպրոցական մանկավարժության վերաբերյալ թեստային աշխատանք, «Բուլինգը դպրոցում» թեմայով էսսե և «21-րդ դարի ուսուցիչը իմ պատկերացմամբ» թեմայով աշխատանք: Վերջին փուլը հաղթահարել էր 9 աշակերտ, որոնք էլ օլիմպիադայի արդյունքների ամփոփմանը ներկայացան իրենց թեմատիկ աշխատանքներով:

Ելույթ ունեցողները ներկայացրին ժամանակակից ուսուցչի իրենց պատկերացումները, փորձեցին տարբեր ձևակերպումներով բնութագրել նրա կոչումն ու առաքելությունը՝ կենտրոնանալով 21-րդ դարի ուսուցչի կերպարի ամենակարևոր հատկանիշների վրա, միաժամանակ ընդգծելով՝ ինպիսին չպետք է լինի մեր օրերի ուսուցիչը:

«Ուսուցիչը կարող է փոխել աշակերտի կյանքը, իսկ աշակերտն էլ՝ ամբողջ աշխարհը... Նա այն մարդն է, որը կառուցում է

ապագան՝ կրթելով սերունդներին»,- վստահեցրեց Վաղարշ Վաղարշյանի անվան №80 դպրոցի իններորդցի Մարգարիտա Բեգլարյանը: Հենց նա էլ հանձնաժողովի անդամների որոշմամբ արժանացավ մրցանակային 1-ին տեղին: 2-րդ տեղը համապատասխան չափանիշներով զբաղեցրեց Վարդան Արևելցու №104 հիմնական դպրոցի սան Դավիթ Բարաղամյանը, 3-րդ տեղը՝ Մարի Ավագյանը, իսկ 4-րդ տեղը՝ Խրիմյան Հայրիկի անվան դպրոցի աշակերտուհի Սեդա Մուրադյանը:

Մրցանակակիրներն ու ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտները ստացան հավաստագրեր և խրախուսական նվեր-գրքեր. գիրք-նվերները ինքնանպատակ չէին, այլ շատ կարդալու և սովորելու խորհուրդ ունեին:

«Ամենակարևոր բաները դուք կարողացել էիք զգալ. ուսուցիչը, առաջին հերթին, պետք է արժեքներ ունենա, լինի բարեկիրթ: Եթե դուք նման ուսուցիչներ ունեք՝ ուրեմն երջանիկ եք»,-ասաց Մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը:

Արդյունքների ամփոփումից հետո աշակերտներին սպասում էին համալսարանի պատմության թանգարանում, ուր նրանց համար իրականացվեց ուսանելի ու ճանաչողական էքսկուրսիա:

Հանձնաժողովի անդամները ընտրել էին նաև հաղթող ուսանողներին, թեև, ինչպես նկատեցին, արդեն հաղթողներ էին օլիմպիադայի երրորդ փուլը հաղթահարած բոլոր 17 ուսանողները, որոնք ներկայացրին անհատական և խմբային նախագծեր՝ «Մանկության ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով:

Ուսանողները կատարել էին թեստային աշխատանք, վերլուծել մանկավարժական իրավիճակներ, իսկ վերջին փուլը հաղթահարածները ներկայացրել էին մանկության ժամանակակից հիմնախնդիրներին անդրադարձող նախագծեր:

Ուսանողները տեսաֆիլմերի միջոցով ներկայացրին մանկության մերօրյա հիմնախնդիրները՝ հիմնականում անդրադառնալով մեր ժամանակների ամենացավոտ խնդրին՝ վիրտուալ աշխարհը փոխարինել է երեխայի կյանքում իրական խաղերին ու շփումներին, ներկայացնելով դա որպես մերօրյա անվտանգային խնդիր:

«Երջանիկ մանկությունը առողջ հասարակության հիմքն է», «Մանկությանը ուշադրություն դարձնելով՝ կարող ենք պատկերացնել՝ ինչ ապագա կունենանք». այս և նմանօրինակ գաղափարների շուրջ հարցադրումներով ու ձևակերպումներով ուսանողները ներկայացրին իրենց դիրքորոշումները մանկության ժամանակակից հիմնախնդիրների վերաբերյալ:

Հրապարակվեցին համահամալսարանական օլիպիադայի հաղթողների անունները, ըստ որի՝ 1-ին տեղում Բանասիրական ֆակուլտետի ուսանողուհիներն էին՝ Արփինե Ստեփանյանը, Մայա Ջամալյանը և Լիանա Թովմասյանը: 2-րդ տեղը բաժին հասավ Հոգեբանության և սոցիալական մանկավարժության ֆակուլտետի ուսանուհիներ Անուշ Անանյանին և Մերի Աբալյանին, իսկ 3-րդ տեղում Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողուհի Վարդիթեր Պողոսյանն էր:

Երբ երեխան մեծերի համար թիրախ դարձավ՝ իր իսկ հարցին պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը պատասխանեց. «Շատ կարևոր է հասկանալ մանկության ժամանակակից խնդիրները և դրանք լուծելու ալգորիթմներ մշակել»:

Հենց այդ հիմնախնդիրների բացահայտմանն էր միտված օլիմպիադան, որն էլ ապագա մանկավարժներին մտածելու, խորհելու և եզրահանգումներ անելու հնարավորություն տվեց: Այդ հնարավորությունը վերջիններիս համարձակություն կտա՝ վստահորեն մտնել դպրոց և սովորեցնել ու կրթել աշակերտներին, որոնց գիտելիքահեն մտածողությամբ ու արժեհամակարգով է պայմանավորված է մեր երկրի ապագան:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ՝ ՀՈԼՈՎԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ

Մանկավարժական համալսարանի Մանկավարժության ամբիոնի ուսանողների մանկավարժական պրակտիկաներն ավանդույթի համաձայն ամփոփվում են հետաքրքիր ձևաչափերով: Այս անգամ տարբեր ֆակուլտետների բակալավրիական 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողները մանկավարժական պրակտիկաների ընթացքում կատարած արտադասարանական աշխատանքները ներկայացրին հոլովակների և նախագծային աշխատանքի ձևաչափով:

«Այս նախագիծը ինքնանպատակ չէ, ուսանողը պետք է կարողանա դեռևս ուսանողական նստարանից ներդրում անել իր մասնագիտության մեջ»,-ասաց Մանկավարժության ամբիոնի ղեկավար Աիդա Թոփուզյանը՝ ընդգծելով, որ ստեղծված հոլովակները կարող են ուսուցչի համար կիրառական նյութ դառնալ: Նա կարևորեց ուսանող-դասախոս համագործակցությունը պրակտիկայի անցկացման ընթացքում և ուսանողների կողմից արտադասարանական աշխատանքի թվայնացումն ու մեդիակրթության անհրաժեշտությունը:

Ստեղծվեց հանձնախումբ, որը վերջում պիտի գնահատեր հոլովակների դաստիարակչական ներուժը, ներայցման ձևը, դասախոս-ուսանող համատեղ նախաձեռնողականությունն ու ստեղծագործականությունը և աշակերտ-ուսանող համագործակցությունը:

Պրակտիկայի ընթացքում իրենց կատարած աշխատանքները ներկայացրին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, Բանասիրության, Սկզբնական կրթության, Պատմության և հասարակագիտության և Գեղարվեստական կրթության ֆակուլտետների ուսանողները: Նրանք խոսեցին առաջին օրերի ընթացքում հանդիպած դժվարությունների, դրանց հաղթահարման, ի վերջո փոխվստահության մթնոլորտի ստեղծման ու աշակերտների հետ տարբեր միջոցառումների կազմակերպման ու համարձակ նախաձեռնությունների մասին: Պրակտիկայի ընթացքում ուսանողները հասկացել են՝ ուսուցիչը միայն գիտելիք փոխանցող չէ, այլ ուղղորդող և արժեքներ ձևավորող, և որ իրենց առաքելությամբ պատասխանատվություն են կրելու ապագայի հանդեպ՝ կրթելով ամենատարբեր մասնագետների:

№33, Սմբատ Բյուրատի անվան №125, №100, Աշոտ Նավասարդյանի անվան №196, №104 դպրոցներում ու «Վարդանանց կրթահամալիր»-ում անցկացված պրակտիկաների վեց շաբաթների ընթացքում ուսանողները բազմաթիվ նախաձեռնություններով են հանդես եկել՝ սովորողների մեջ սերմանելով սեր ու ջերմություն հայրենիքի, մայրերի, գրականության ու այլ արժեքների հանդեպ:

Պատմության ու հասարակագիտության ֆակուլտետի ուսանողները մշակութային վայրեր այցելելու արդյունքում իրականացրել էին նախագծային աշխատանք՝ ներկայացնելով մեր պատմությունն ու մշակույթը, իսկ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի պրակտիկանտները «Երաժշտության կախարդական ուժը դպրոցում» խորագրի ներքո աշակերտներին ծանոթացրել էին ոչ միայն դասական, այլև հայկական ժողովրդական երաժշտական գործիքներին՝ ներկայացնելով քանոնի և շվիի պատմությունը, նաև երեխաների հետ խեսել խմբավարական արվեստի մասին:

Հատկապես մեծ թիվ էին կազմում բանասերները, որոնք հանդես եկան թիմային աշխատանքով ու ամենատարբեր միջոցառումներով, որոնցից մեկն էլ «Արարատի բաբախող սիրտը» միջոցառումն էր՝ նվիրված հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազին:

Ապագա սոցիոլոգները ներկայացրին մասնագիտական կայացման իրենց պատմությունը, տարբեր ֆակուլտետների պրակտիկանտները ներկայացրին իրենց կողմից կյանքի կոչված «Պոեզիայի օր», «Ընտանիք և հայրենիք», «Մի սիրտ, մի հայրենիք», «Հայրենիքիս հետ», «Մայր, գարուն, հայրենիք» և շատ այլ նախաձեռնություններ՝ վկայելով իրենց տեսական գիտելիքները պրակտիկայում հմտորեն կիրառելու կարողությունների մասին:

Հանդիպման ավարտին ապագա երաժիշտները կիթառով երգեր կատարեցին, որին միացան դասախոսները և ուսանողները:

Ուսանողների պրակտիկայի արդյունքները գնահատեցին ՀՊՄՀ ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը, Մանկավարժության ամբիոնի վարիչ Աիդա Թոփուզյանը, Որակի կենտրոնի ղեկավար Անի Հակոբյանը, Լրատվության և հանրության հետ կապերի կենտրոնի տնօրեն Դիանա Մարկոսյանը, Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը: Նրանք փաստեցին՝ գաղափարները և թեմաները լավ էին ընտրված, թիմային համագործակցված աշխատանքը նկատելի էր, հոլովակները սիրով էին արված, որ 21-րդ դարի աշակերտին պետք է կարողանալ փոխանցել հետաքրքիր գիտելիք ու ճաշակ, ուսանողները պետք է կարողանան վերադարձնել դասախոսների ներգործության ուժն ու եռանդը:

Ամփոփելով պրակտիկայի արդյունքների ներկայացման տվյալ ձևաչափով առաջին փորձը՝ Աիդա Թոփուզյանը շնորհակալություն հայտնեց դասախոսական կազմին՝ ուսանողներին ոգեշնչելու, նրանց գաղափարները կյանքի կոչելուն աջակցելու և ուղղորդելու համար, իսկ ուսանողներին վստահեցրեց, որ կարողացել են իրենց գիտելիքները սիրով փոխանցել աշակերտներին՝ նրանց միջավայրում զգալով ուսուցչի մասնագիտության մարդասիրական նվիրումը:

Սիլվա Ասրյան

ՈՒՍԱՆԵԼԻ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԴԱՍԸՆԹԱՑ

ԵՐԲ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ

2024 թ. հոկտեմբերի 31-ին Կոլումբիայի Կալի քաղաքում ընթացող ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 16-րդ համաժողովի ընթացքում Հայաստանն ընտրվել է որպես կողմերի 17-րդ համաժողովի (COP17) հյուրընկալող երկիր, որը կայանալու է Երևանում 2026 թվականի հոկտեմբերին:

ՄԱԿ-ի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան բնապահպանական երեք գլոբալ կոնվենցիաներից մեկն է, որը կարգավորում է միջազգային հանրության ջանքերը շրջակա միջավայրի կենսունակության, կենսաբանական բազմազանության պահպանման, վերականգման և բնական ռեսուրսների կայուն օգտագործման ոլորտում:

Այս համատեքստում մայիսի 27-ին ՄԱԿ-ի երևանյան գրասենյակում, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, BESNet Armenia և ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի հովանավորությամբ, կազմակերպվել էր «Կենսաբազմազանության տվյալների կառավարում՝ դաշտից թվային հարթակ» թեմայով ինտերակտիվ դասընթաց, որին մասնակցեցին նաև ՀՊՄՀ «Կենսաբանություն-քիմիա» մասնագիտության բակալավրիատի առաջին կուրսի ուսանողները՝ Կենսաբանության, քիմիայի ու նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյանի առաջնորդությամբ:

Դաընթացը վարում էր BES-Net Armenia ծրագրի փորձագետ-վերլուծաբան, կենսաբանական գիտությունների թեկնածու Արմինե Աբրահամյանը, որը կարևորեց Հայաստանի բնաշխարհի բացառիկ հարստությունը:

Գտնվելով կենսաբազմազանության երկու թեժ կետերի՝ կովկասյան և Իրանա-Անատոլիական կենսաշխարհագրական գոտիների հատման գոտում և ունենալով ընդամենը 29,743 կմ2 տարածք, Հայաստանի Հանրապետությունում հանդիպում

են 142 էնդեմիկ բուսատեսակ և 495 էնդեմիկ կենդանատեսակ, ինչը Հայաստանի բնությունը դարձնում է գիտական մեծ արժեք ներկայացնող եզակի տարածք:

Ա. Աբրահամյանը կարևորեց Հայաստանի հարուստ կենսաբազմազանության պահպանության անհրաժեշտությունը և այդ գործում կենդանի օրգանիզմների տարածվածության մասին տվյալների թվայնացման կարևորությունը: Այդ իմաստով փորձագետը դասընթացի ընթացքում ուսանողներին ներկայացրեց ինչպես գիտական հանրությանը, այնպես էլ հանրության լայն շրջանակներին մատչելի iNaturalist գործիքը և GBIF (Global Biodiversity Information Facility-Կենսաբազմազանության համաշխարհային տեղեկատվական հիմնադրամ) միջազգային հարթակը: Եթե iNaturalist-ը անհատների համար նախատեսված գործիք է, ապա GBIF-ը «մեծ գիտության» գլխավոր արխիվն է, որտեղ աշխարհի տարբեր երկրներից հավաքագրված կենսաբազմազանության մասին տվյալները հասանելի են գիտական հանրությանը:

Դասընթացի ընթացքում քննարկվեցին տվյալների հավաքագրման, թվայնացման և պահպանման մեխանիզմները, ընդգծելով, որ ժամանակակից գիտությունը վաղուց արդեն անցել է թվային հարթակներ: Առանձին անդրադարձ կատարվեց BES-Net Armenia ծրագրին: Նշվեց, որ Հայաստանը դարձել է BES-Net նախաձեռնությանը միացած 13-րդ երկիրը, և այդ ծրագրի առաջնահերթություններից են էկոհամակարգային ծառայությունների գնահատումն ու նրա մեթոդաբանության մշակումը՝ նպատակ ունենալով միջազգային մոտեցումները Հայաստանի տեղական պայմաններին հարմարեցնելը և կենսաբազմազանության գնահատման բազմակողմ ազգային հարթակ ստեղծելը:

Դասընթացի կարևոր բաղադրիչներից էր ուսանողների հետ գործնական աշխատանքի իրականացումը, որի ընթացքում փորձագետի ուղղորդմամբ և օգնությամբ իրենց սմարթֆոնների մեջ ներբեռնեցին iNaturalist հավելվածը: Վերջինս սովորական սմարթֆոնը վերածում է գիտական գործիքի, իսկ նրա տիրոջը՝ «քաղաքացիական գիտնականի»: Այն աշխատում է շատ մատ-

չելի ու հետևյալ քայլերի հաջորդականությամբ. ուսանողը լուսանկարում է ցանկացած բույս կամ կենդանի, արհեստական բանականությունը և համաշխարհային գիտական համայնքն օգնում են վայրկյանների ընթացքում ճանաչել այդ օրգանիզմի տեսակային պատկանելությունը, և արդյունքում կատարված լուսանկարը դառնում է գիտական տվյալ, որն օգնում է գիտնականներին ողջ աշխարհում ուսումնասիրել և պաշտպանել բնությունը:

Դասընթացի ընթացքում Ա. Աբրահամյանը iNaturalist հավելվածում ստեղծեց «Բնությունից բայթ՝ ուսանողական BioBlitz» նախաձեռնությունը, որի գործնական կիրառության համար ուսանողներն այցելեցին Ջրվեժի «Արգելոցապարկային պարկ»: Այստեղ ուսանողների տեսական գիտելիքները վերածվեցին իրական հետազոտության. ուսանողները լուսանկարում էին ազգային պարկի բուսատեսակները, գրանցում iNaturalist հարթակում և որոշում դրանց տեսակային պատկանելիությունը:

Օրը լի էր հետաքրքիր բացահայտումներով

Վերջերս մենք հնարավորություն ունեցանք մասնակցելու շատ հետաքրքիր և ուսուցողական ծրագրի, որը նվիրված էր Հայաստանի կենսաբազմազանության ուսումնասիրմանը և տվյալների թվայնացմանը: Մեր օրը սկսվեց ՄԱԿ-ի գրասենյակում, որտեղ մասնակցեցինք մասնագիտական դասընթացի, իսկ հետո շարունակվեց Ջրվեժի արգելոցապարկում գործնական աշխատանքով: Սկզբում ես մի փոքր լարված էի, քանի որ առաջին անգամ էի հայտնվում նման միջազգային կազմակերպության միջավայրում, բայց հետո շատ արագ ներգրավվեցի գործընթացի մեջ:

ՄԱԿ-ի գրասենյակում մեզ ներկայացրին Հայաստանի հարուստ կենսաբազմազանությունը, էնդեմիկ և ինվազիվ բուսատեսակները, ինչպես նաև խոսեցին բնության պահպանության կարևորության մասին: Ինձ հատկապես տպավորեց այն փաստը, որ Հայաստանը, իր փոքր տարածքով հանդերձ, ունի այդքան մեծ թվով էնդեմիկ տեսակներ: Դա ինձ ստիպեց ավելի շատ գնահատել մեր երկրի բնությունը և հասկանալ, թե որքան կարևոր է այն պահպանելը: Մենք ծանոթացանք iNaturalist հավելվածին և սովորեցինք, թե ինչպես կարելի է դրա միջոցով լուսանկարել բույսերն ու կենդանիները, ճանաչել դրանց տեսակները և տվյալները փոխանցել գիտական հարթակներին: Դասընթացից հետո այցելեցինք Ջրվեժի արգելոցապարկ, որտեղ սկսվեց գործնական աշխատանքը: Մենք շրջեցինք պարկում, լուսանկարեցինք տարբեր բուսատեսակներ և անմիջապես գրանցեցինք դրանք iNaturalist հավելվածում: Շատ հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես մեր կատարած սովորական լուսանկարները դառնում են իրական գիտական տվյալներ, որոնք կարող են օգտագործվել հետազոտությունների համար ամբողջ աշխարհում: Այս այցն ինձ համար շատ արժեքավոր փորձառություն էր: Այն հնարավորություն տվեց ոչ միայն ընդլայնել գիտելիքներս Հայաստանի բնաշխարհի մասին, այլև գործնականում մասնակցել բնության ուսումնասիրությանը: Հատկապես տպավորվեցի այն փաստից, որ յուրաքանչյուր մարդ կարող է իր փոքր ներդրումն ունենալ գիտության զարգացման և կենսաբազմազանության պահպանության գործում: Օրը լի էր նոր գիտելիքներով, հետաքրքիր բացահայտումներով և դրական տպավորություններով, որոնք երկար կհիշեմ:

Քրիստինե Պետրոսյան

ԱՊԱԳԱՅԻ ՀԱՆԴԵՊ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄՈՎ

Մենք՝ Մանկավարժական համալսարանի կենսաքիմիայի բաժնի առաջին կուրսի ուսանողներս, հնարավորություն ունեցանք այցելելու ՄԱԿ-ի գրասենյակ: Այցը մեզ համար շատ հետաքրքիր և ուսուցողական էր. մենք ծանոթացանք ՄԱԿ-ի գործունեությանը, նպատակներին և այն կարևոր աշխատանքներին, որոնք իրականացվում են աշխարհի տարբեր երկրներում՝ խաղաղության, կրթության, առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում: Հատկապես տպավորիչ էր հասկանալ, թե որքան մեծ դեր ունի այս կազմակերպությունը գլոբալ խնդիրների լուծման գործում: Այցը մեզ օգնեց ավելի լայն պատկերացում կազմել միջազգային համագործակցության կարևորության մասին և գիտակցել, որ յուրաքանչյուր երիտասարդ կարող է իր ներդրումն ունենալ հասարակության զարգացման գործում: Մենք մեծ հետաքրքրությամբ լսեցինք մասնագետների ներկայացումները և ստացանք նոր գիտելիքներ, որոնք օգտակար կլինեն մեր հետագա ուսումնառության և մասնագիտական զարգացման համար:

Այդ օրը մեզ համար դարձավ ոչ միայն ճանաչողական, այլև ոգեշնչող փորձառություն: Ծանոթացանք iNaturalist ծրագրին, որի միջոցով ավելի հեշտ կկարողանանք տարածել մեր կամ այլ տարածաշրջանի էնդեմիկ տեսակները: Նաև այցելեցինք Ջրվեժի արգելոց կոչվող տարածք, որտեղ առավել հանգամանորեն ծանոթացանք այդ ամենին և հնարավորություն ունեցաք առաջին անգամ ինքներս օգտագործել նոր հավելվածը:

Մենք վերադարձանք նոր գիտելիքներով, դրական տպավորություններով և ապագայի հանդեպ ավելի մեծ պատասխանատվության զգացումով:

Արուսիկ Մանուկյան

Գիտության ապագան թվային հարթակներն են

Իմ ուսանողական կյանքի ամենահիշարժան օրերից մեկն է, երբ մասնակցելով ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի սեմինարին, ես ոչ միայն խորացա Հայաստանի բնության եզակիության մեջ, այլև բացահայտեցի գիտության ապագան՝ թվային հարթակները: Ամենահետաքրքիր պահը iNaturalist հավելվածի հետ աշխատանքն էր. երբ Ջրվեժի ազգային պարկում լուսանկարում ու գրանցում էինք բույսերը, հասկանում էինք, որ մեր փոքրիկ հետազոտությունը դառնում է համաշխարհային գիտական տվյալների բազայի մի մասը: Այս փորձն ինձ համար հիմք դրեց հասկանալու, որ ժամանակակից կենսաբանը պետք է տիրապետի ոչ միայն բնագիտական գիտելիքների, այլև տվյալների վերլուծության թվային մեթոդների: Ոգևորված եմ և պետք է շարունակեմ այս գործունեությունը և իմ ներդրումն ունենամ մեր երկրի կենսաբազմազանության պահպանման գործում:

Սոնա Ասլվածատրյան

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

-Հարգելի տիկին Աբրահամյան, ինչպես ընտրեցիք Մանկավարժականի պարային բաժինը:

-Դպրոցն ավարտելուց հետո ուսումս ուզում էի շարունակել ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում: Բայց շատ պատահական իմացա, որ Մանկավարժական ինստիտուտում բացվել է պարային բաժին՝ Ազատ Ղարիբյանի և Թերեզա Գրիգորյանի նախաձեռնությամբ: Առաջին ընդունվողներից մեկն էլ ես էի: Այստեղ 4 տարի սովորել եմ Ազատ Ղարիբյանի կուրսում: 1980 թ. ավարտելուց հետո մինչ այսօր աշխատում եմ իմ սիրելի ամբիոնում:

«Եթե դու դուրս ես գալիս միօրինակությունից, ուրեմն ինչ-որ մի նոր բանի սկիզբ ես ազդարարում, իսկ եթե միօրինակության մեջ ես շարունակում, դա ուղղակի անհետաքրքիր է...».

Գոհար Աբրահամյան

-Ինչ եք դասավանդում համալսարանում և ինչ պարեր եք սովորեցնում ուսանողներին:

-Ես դասավանդում եմ «Հայկական ժողովրդական պար», «Բալետմայստերի վարպետություն» և «Բալետմայստերական ռեժիսուրա» մագիստրատուրայում: Առաջին երկու առարկաների միջոցով մեր ուսանողներին սովորեցնում ենք հայոց պարի գանձարանի հատընտիր նմուշները, այնուհետև երաժշտական վերլուծություն կատարելուց հետո, մշակում ենք պարային դրամատուրգիան, որի հաջորդական զարգացումների հիման վրա ստանում ենք ամբողջական պարային բեմադրություն:

Իսկ բալետմայստերական ռեժիսուրան այն մեծածավալ կտավն է, որը ստեղծվում է բալետմայստեր ռեժիսորի մտորումների հիման վրա և հանդիսանում է բալետմայստեր ռեժիսորի, բալետմայստեր բեմադրողի, կոմպոզիտորի, նկարիչ ձևավորողի, պարող- կատարողի և հանդիսատեսի համատեղ աշխատանքը:

-Դուք պարային մի շարք անկրկնելի բեմադրություններով հիացրել ու զարմացրել եք հանդիսատեսին ...

-Առաջին պարային խորեոգրաֆիկ ներկայացումը՝ «Պարարվեստի խաչմերուկներում», բեմադրել եմ 2014 թվականին, որտեղ ներկայացրել եմ աշխարհի տարբեր ազգերի պատմամշակութային արժեքները, գեղարվեստական առանձնահատկությունները և մասնավորապես պարարվեստը:

2018 թվականին իմ հաջորդ ավարտական կուրսը հանդես եկավ երեք պարային խորեոգրաֆիկ ներկայացումներով՝ «Քայլ առաջ», «Հազար ու մի գիշեր» և «Փարաջանովի «Նռան գույնը»: Առավել բարդ էին ընթանում «Նռան գույնի» բեմադրական աշխատանքները: Ուսանողներիս հետ վերծանել էինք փարաջանովյան բարդ կոդավորումներից շատերը և դրանով իսկ ավելի էինք մոտեցել Փարաջանովի ներքին հոգեբանությանն ու խոհափիլիսոփայությանը:

-Հանդիսատեսին հրաշալի զգացողություններ պարգևեց նաև Ձեր բեմադրած «Մինասի գույները» 2022 թվականին:

-Չգիտեմ՝ որքանով է ճիշտ, բայց ես ուզում եմ ձեզ հետ անկեղծանալ: Ես Մինասի գույների մեջ տեսնում եմ ինքս ինձ, իմ կյանքի էությունը, մտածելակերպը, ճաշակև ու իմաստնությունը: Մինասի ներաշխարհի որոնումներն ու հավերժությունը, հոգևոր լարվածությունն ու լուսավորությունը վառ ձևով դրսևորվեց արվեստանոցի հրդեհի ժամանակ, որի հետ մոխրացավ նաև Մինասը... Այդ տեսարանում օգտվել էի տաղանդավոր կոմպոզիտոր Ավետ Տերտերյանի 3 սիմֆոնիայից:

Բոլոր դեպքերում Մինասն ինձ համար դարձավ կուռք, և դա անվիճելի է...

Երբեք չեմ մոռանա այն զգացողությունը, որ ապրեցի, երբ Մինաս Ավետիսյանի տղան մոտեցավ ինձ և ասաց. «Ինձ թվում էր, թե հայրիկի հոգին էր թևածում Օպերայի և բալետի թատրոնում»:

Իսկ այս տարի՝ 2026 թվականին, մեր ավարտական որակավորման քննությունը նվիրված էր մեր սիրելի ամբիոնի հիմնադրման 50-ամյակին, որի հսկայածավալ աշխատանքներն ու ձեռքբերումները ուղղակի հիացմունքի էին արժանի: Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքները, բեմադրությունների բազմաբովանդակությունը և գրագիտությունը, շենշող հագուստների հարստությունը չափազանց ստացված էին և տպավորիչ:

ԳՈՀԱՐ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

Սիրով ու խորին հարգանքով եմ ուզում խոսել ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանի մասին. այս 16 տարիների ընթացքում նա միշտ եղել է մեր կողքին իր միջամտություններով ու կատարած բեմադրություններով, որոնք ուղղակի եղել են աննախադեպ: Իսկ ներկայացումների վերջաբանները (ֆինալ) նրա մտքի վառ դրսևորումն են, հայկական բարձրաճաշակ պարարվեստի իսկական գոբելենը (Մինասի գույներում):

-Որպես ամփոփում, կասեք՝ ինչն եք գնահատում արվեստագետի մեջ:

-Շնորհը, նվիրումը և մաքրամաքուր հոգին:

Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի

ԵՐԲ ՈՒՍԱՆՈՂԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԸ

Դրվագներ մեր Մանկավարժական պրակտիկայից

Երբ դու ընտրում ես մանկավարժի մասնագիտությունը, ապա, որպես պրակտիկանտ, առաջին քայլերդ դպրոցի դռնից ներս, ուղեկցվում են ներքին մի լուռ հուզմունքով. մի կողմից՝ անորոշության զգացումը, մյուս կողմից՝ մեծ սպասումն ու ձգտումը՝ հաստատելու սեփական բուհում ձեռք բերած գիտելիքներիդ ու կարողություններիդ հաստատունությունը:

Միջանցքներում վազվզող երեխաների զրնգուն ձայները, դեպի դասարան ներս կանչող զիլ զանգի ղողանջը, ուսուցիչների մտազբաղ ու կենտրոնացած քայլերն ստեղծում էին այն յուրահատուկ միջավայրը, որտեղ մենք՝ պրակտիկանտներս, զգում էինք այն հետաքրքրական աշխարհի շունչը, որը դեռ մանկուց տարիներ շարունակ պատկերացրել ենք սեփական անուրջներում:

Այս պահերին է, որ ակնառու և հստակ գիտակցում ես, որ ուսուցչի առաքելությունը ոչ միայն իր սաներին գիտելիքներ, կարողություններ փոխանցելն է, այլև նրանց անձնային և ազգային արժեքներն ու ինքնությունը ձևավորելը. մի պատասխանատու և ստեղծագործական աշխատանք, որտեղ ուսուցումը միահյուսվում է մշակույթի, արժեքների և մարդկային փոխհարաբերությունների փոխանցման հետ:

Որպես բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողներ՝ մենք մեր մանկավարժական պրակտիկան այս տարի անցկացրինք Երևանի Սմբատ Բյուրատի անվան №125 դպրոցում, որտեղ անցկացրինք տարբեր դասալսումներ, դիտարկեցինք ուսուցիչների աշխատանքի մեթոդներն ու ձևերը, հնարավորություն ունենալով բուհում ստացած տեսական գիտելիքները կապել գործնական աշխատանքի հետ և ավելի լավ պատկերացնել ուսուցչի դերն ու առաքելությունը: Ետ նայելով, կարող եմ հաստատապես նշել, որ մեր առաջին ուսումնաճանաչողական պրակտիկան կարևոր փուլ էր մասնագիտական զարգացման ճանապարհին, քանի որ էականորեն նպաստեց մեր մասնագիտական գիտելիքների և մանկավարժական հմտությունների ձևավորմանը:

Այս գործընթացում մեծ մասնագիտական ու մանկավարժական աջակցություն ցուցաբերեցին պրակտիկայի մեր ղեկավարները՝ տիկին Արմիե Մուրադյանը և տիկին Սուսաննա Սիսյանը, որոնց անմիջական ուղղորդումը, մասնագիտական խորհուրդներն ու փորձառու մոտեցումները շարունակ ոգեշնչում էին մեզ: Իսկ նրանց հետևողականությունը դարձավ այն կայուն հենարանը, որով ավելի վստահ կարողացանք կազմակերպել մեր 6–շաբաթյա ուսումնաճանաչողական պրակտիկան:

Հատկապես ցանկանում եմ ներկայացնել ուսանողներիս կողմից պրակտիկայի շրջանակում կազմակերպված արտադասարանական 4 միջոցառումները, որոնց հիմքում դրված էին հստակ դաստիարակչական նպատակներ՝ զարգացնել աշակերտների բարոյական, ազգասիրական ու մարդասիրական զգացումները, ամրապնդել ընտանիքի, ծնողի և հայրենիքի հանդեպ հարգալից ու անձնվեր վերաբերմունքը, դաստիարակել ազգային ինքնությանը բնորոշ կարևորագույն որակներ:

Համագործակցելով փորձառու ուսուցիչների և պրակտիկայի մեր ղեկավարների հետ ու ստանալով նրանց մասնագիտական ուղղորդումներն ու ջերմ խորհուրդները՝ աշխատում էինք ստեղծել բովանդակալից, խանդավառ, գեղագիտորեն հաճելի միջավայր՝ երեխաներին փոխանցելով, մեր կարծիքով, կենսական շատ կարևոր արժեքներ:

Պոեզիայի միջազգային օրվա առիթով կազմակերպեցինք դպրոցական միջոցառում, որը մեզ համար դարձավ մասնագիտական կարևոր փորձառություն, որը նպաստեց մեր համախմբվածության բարձրացմանը, փոխաջակցության ձևավորմանը և թիմային աշխատանքի արդյունավետության ամրապնդմանը:

Հաջորդ արտադասարանական միջոցառումը բուլլինգի կանխարգելման վերաբերյալ մեր նախագծային աշխատանքն էր: Աշխատանքի ավարտին կազմեցինք «Խոսքի և վերաբերմունքի կանոնագիրք», որը կոչված էր նպաստելու հարգալից և անվտանգ դասարանական միջավայրի ձևավորմանը: Նախագիծը ցույց տվեց, որ փոխադարձ հարգանքն ու խոսքի պատասխանատու կիրառումը առողջ դասարանական միջավայրի ձևավորման կարևոր նախապայմաններն են:

6-րդ դասարանում մեր կազմակերպած հաջորդ արտադասարանական միջոցառումը կրում էր «Մոր ժպիտով ծաղկող հայրենիք» խորագիրը: Բոլորս գիտենք, որ երբ ժպտում են մայրերը, վերընձյուղվում են հույսի ծիլերը, և խաղաղությունն ամուր արմատներ է գցում հայոց հողի մեջ: Այս խորիմաստ գաղափարով էլ այդ օրը մայրական սիրո, հայրենասիրության և խաղաղության թեմաները երեխաների և մեր շուրթերից հնչեցին յուրահատուկ անկեղծությամբ ու հուզիչ կատարումներով՝ որպես երախտիքի խոսք՝ ուղղված Մայր, Մայրենի լեզու և Հայրենիք բարձրագույն արժեքներին:

Միջոցառման ընթացքում մենք անդրադարձանք երեք կարևոր արժեքների՝ մորը, հայրենիքին և գարնանը, որոնք խորհրդանշում են սեր, կյանք և ցանկացած նորի սկիզբ:

Պրակտիկայի մեր խմբով հաջորդ արտադասարանական դաստիարակչական միջոցառումը կազմակերպեցինք 5-րդ դասարանում: Այն նվիրված էր ողջ աշխարհում մայիսի 15-ին նշվող Ընտանիքի միջազգային օրվան: Միջոցառման առանցքում ընտանիքն էր՝ որպես ազգապահպան կարևորագույն արժեք, սիրո, համերաշխության և սերունդների ամուր կապի խորհրդանիշ:

Խոսելով ընտանիքի և հայրենիքի մասին՝ մենք մեկ անգամ ևս բարձրաձայնեցինք, որ դրանք երկու անբաժանելի սրբություններ են: Ընտանիքը մեր ներքին ուժն է, իսկ հայրենիքը՝ այն լույսը, որի ներքո մենք ապրում և արարում ենք: Տպավորություններս շատ խորն են, քանի որ ընկերներիս հետ միասին կարողացանք ստեղծել մի մթնոլորտ, որտեղ կարևորվեց հավատարմությունը մեր արմատներին: Պրակտիկայի ավարտից հետո բուհում, մանկավարժության ամբիոնի կողմից կազմակերպվեց ևս մի հիշարժան և բովանդակալից օր, երբ համալսարանի տարբեր ֆակուլտետների պրակտիկայի խմբերի հետ զուգահեռ ներկայացրինք մեր կատարած արտադասարանական միջոցառումներն ամփոփող տեսանյութը, զգացինք մեր կատարած աշխատանքների արդյունավետությունը և ուրվագծեցինք մեր հետագա պրակտիկաների անելիքները:

Ամփոփելով տպավորություններս, կարող եմ ասել, որ մեր այս նախաձեռնությունները հիրավի դարձան մանկավարժական փորձի, նվիրումի և երիտասարդական ստեղծարարության գեղեցիկ համադրություն՝ նպաստելով մեր՝ որպես ապագա ուսուցիչների կայացման գործընթացին, որոնց համար երախտապարտ ենք մեր Մայր բուհին, որը հնարավոր դարձրեց ուսումնաճանաչողական պրակտիկայի շրջանակում, թեկուզև կարճ ժամանակով, ընդգրկվել դպրոցական անմոռանալի առօրյայի գլխապտույտ հորձանուտում:

Արփինե Ստեփանյան
Բանասիրական ֆակուլտետի
2–րդ կուրս

ԱՄՓՈՓԵՑԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մանկավարժական համալսարանում հունիսի 8-ին ամփոփվեցին Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի կազմակերպած հինգ մոդուլներով դասընթացները՝ ուղղված դասավանդողների փափուկ հմտությունների զարգացմանը: Եռամսյա ծրագիրն իրականացվեց Եռակողմ հուշագրի շրջանակում՝ «ԷԿՍԵՈ», «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամների և Մանկավարժական համալսարանի համագործակցությամբ:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց ծրագրի թե՛ աջակիցներին, թե՛ մասնակիցներին՝ ընդգծելով, որ ժամանակակից մարդը մրցունակ լինելու համար պետք է անդադար սովորի, հասկանա նորարարական միտումները: Այդ համատեքստում նա կարևորեց փորձի փոխանակումն ու տարբեր կրթական միջավայրերի ներկայացուցիչների շփումները՝ ծրագիրը համարելով հաջողված:

Լիլիթ Մկրտչյանը ուրախ է, որ ներգործած ջանքերն ապարդյուն չանցան, և վերապատրաստվածները ստացած նորարարական գիտելիքներն ու հմտությունները ծառայեցնելու են երկրի զարգացմանը:

«Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Լիանա Բադալյանն իր բարյակցակամությունը հայտնեց՝ մշտապես աջակցելու նման նախաձեռնություններին, որովհետև «վաղվա սերունդը կարիք ունի բաց մտածողությամբ, ակտիվ, պատասխանատու քաղաքացիներ կրթող մասնագետների»:

«Սա փափուկ հմտությունների զարգացման ծրագիր էր, որի ընթացքում բացահայտեցին՝ ինչպես կառավարել հույզերն ու փոփոխությունները»,-ասաց «ԷԿՍԵՈ» հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար Քրիստինա Ծատուրյանը՝ իր գոհունակությունը հայտնելով շահագրգիռ գործընկերներին ու հատկապես Մանկավարժական համալսարանին՝ իր հարկի ներքո ջերմ հյուրընկալության համար:

Քրիստինա Ծատուրյանն ընդգծեց՝ յուրաքանչյուր դասընթաց իրեն ևս հարստացրել է նոր, ժամանակակից գիտելիքներով, նպաստել է մասնակիցների մասնագիտական ու անձնային որակների զարգացմանն ու նաև շարունակական ինքնազարգացմանը:

Եռամսյա վերապատրաստումների մասնակիցները հավաստագրեր ստացան, որոնք համապատասխանում են 2 կրեդիտին, նաև իրենց տպավորություններն ու կարծիքները կիսեցին իրականացված ծրագրի մասին, որն օգնեց կրթական համատեղ միջավայրում ավելի լավ ճանաչել գործընկերներին, ստեղծել հաղորդակցվելու և համագործակցելու կարևոր մշակույթ:

ԹԱԼԻՆ ԱՇԻՔԵԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀՊՄՀ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետում հունիսի 5-ին անցկացվեց «ԱՄՆ-ում (Կալիֆորնիա) և Հայաստանում լոգոպեդ դառնալու գործընթացների համեմատական ուսումնասիրություն. կրթություն, լիցենզավորում, ASHA CCC հավաստագրում և մասնագիտական գործունեության իրավունքներ» խորագրով դասընթաց: Դասընթացը վարում էր ԱՄՆ-ից ժամանած M.S., CCC/SLP/PhD Candidate, Harmony Speech Therapy & Diagnostics-ի համահիմնադիր, Logopedics ՍՊԸ-ի հիմնադիր, լոգոպեդ, ՀՊՄՀ Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի հայցորդ Թալին Աշիքեանը: Դասընթացը նախատեսված էր լոգոպեդների, հատուկ մանկավարժների և ոլորտով հետաքրքրվող շահագրգիռ այլ անձանց համար:

Օրվա բանախոսը ներկայացրեց հետաքրքիր թեմաներ՝ ի՞նչ կրթական և մասնագիտական ուղի է անցնում լոգոպեդը ԱՄՆ-ում (Կալիֆորնիայում) և Հայաստանում, ի՞նչ է ASHA-ի CCC-SLP հավաստագիրը և ինչ դեր ունի մասնագիտական գործունեության մեջ, ինչո՞վ են տարբերվում լիցենզավորման և աշխատանքի իրավունքի պահանջները երկու երկրներում:

Ֆակուլտետի դեկան Գոհար Հովյանը կարևորեց դասախոսությունը և ընդգծեց, որ այս հանդիպումը հնարավորություն կտա ծանոթանալ տարբեր երկրներում ոլորտի ուսուցման առանձնահատկություններին:

Ներկայացված թեմաների շուրջ հետաքրքիր քննարկումներ ծավալվեցին, որից հետո դեպքի վերլուծության միջոցով համատեղ քննարկեցին մասնագիտական զարգացման և միջազգային փորձի կիրառման հնարավորությունները:

ԾԱՌԱՅՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Սարգիս Գևորգի Խաչատրյանը ծնվել է 2007 թվականի հունիսի 16-ին: Դպրոցն ավարտելուց հետո նա ընդունվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հենակետային վարժարան-ավագ դպրոց, սովորել կերպարվեստի բաժնում: Ավարտելուց հետո ընդունվել է ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստի բաժին և 2025 թվականին զորակոչվել բանակ:

Այժմ նա ծառայում է Կապանի N զորամասի տանկային վաշտում:

Ուսումնառության տարիներին Սարգիսը մասնակցել է ՀՊՄՀ Հենակետային վարժարան-ավագ դպրոցում կազմակերպված կերպարվեստի ցուցահանդեսներին՝ աչքի ընկնելով ներկայացրած մի շարք աշխատանքներով: Նկարելուց զատ, Սարգիսը նաև ստեղծագործում է՝ գրում է բանաստեղծություններ ու պատմվածքներ, որոնցում արտահայտում է իր հոգու մեծ սերը Հայաստանի ու հայրենիք կոչվող լեռնաշխարհի մասին: Շնորհալի երիտասարդը ծառայության մեջ էլ շարունակում է ապրել գրականության ու արվեստի կախարդական աշխարհում. ազատ պահերին գրում ու նկարում է:

Գրականության ու արվեստի մեջ փոքր քայլերով, բայց համարձակ ու վստահ նա մոտենում է իր նպատակների ու մտահղացումների իրականացմանը՝ մտովի պատկերացնելով իր երկրի հզորացման տեսլականը:

Բարի ծառայություն մաղթենք մեր համալսարանի 1-ին կուրսի ուսանողին ու շնորհավորենք առաջիկա ծննդյան օրվա առթիվ, նաև զորամասի բոլոր ծառայողներին մաղթենք խաղաղ ծառայություն ու բարի վերադարձ:

Իմ Հայաստան

Սարեր, ձորեր, բարձր լեռներ,
Անտառներ, կիրճ ու հովիտներ,
Ճանապարհներ մեր անսասան...
Սիրում եմ քեզ, իմ Հայաստան:
Լճեր, գետեր ու ջրվեժներ,
Մարզեր, գյուղեր ու քաղաքներ,
Կապան, Գյումրի, Սիս, Երևան...
Սիրում եմ քեզ, իմ Հայաստան:
Արագած, Արա, Խուստուփ գագաթներ,
Տաթև, Նորավանք ու հայոց վանքեր,
Գեղամա իշխանուհի՝ մեր չքնաղ Սևան.
Սիրում եմ քեզ, իմ Հայաստան:
Քարեր, խաչեր, ամրոց-պարիսպներ,
Դուք մեսրոպյան հայոց գրեր
Ու ոսկեդար մեր աննման...
Սիրում եմ քեզ, իմ Հայաստան:
Կորուսյալ երկրի կարոտ Արարատ,
Տրապիզոն, Անի, Տիգրիս ու Եփրատ,
Փառապանծ երկիր Նահապետ Հայկի...
Հորովելներով հոգուս մեջ ծաղկիր,
Օջախները քո թող միշտ շեն մնան,
Սիրում եմ քեզ, իմ Հայաստան:

01.06.2026 թ.

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԻԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի դոցենտ Լիլի Խաչատրյանը հունիսի 12-ին հանդիսատեսին ներկայացրեց տարեվերջյան համերգային գեղեցիկ ծրագիր՝ համեմված դասական ստեղծագործությունների դաշնամուրային ու վոկալ կատարումներով:

«Ամեն տարեվերջի մենք կազմակերպում ենք դասական երաժշտության դասարանական համերգներ: Այս անգամ մեր համերգային ծրագիրը կոչել ենք «Ստեղծագործական հանդիպում»,-ասաց Լիլի Խաչատրյանը՝ հավելելով՝ քանի որ այս տարի երաժշտասեր հանրությունը նշում է Մոցարտի ծննդյան 270-ամյակը՝ համերգային ծրագիրը կբացվի Մոցարտի դաշնամուրային ստեղծագործությամբ:

Լիլի Խաչատրյանի հրաշալի մատուցմամբ Մոցարտի «Ֆանտազիա» ստեղծագործությունը տոնական տրամադրություն ստեղծեց դահլիճում, որին հետևեցին ուսանողների դաշնամուրային և վոկալ կատարումները: Ուսանողները ներկայացրին նաև Լիլի Խաչատրյանի հեղինակային երգերից՝ իր իսկ նվագակցությամբ:

Կատարողական մեծ վարպետությամբ դասարանական համերգին իրենց մասնակցությունը բերեցին շրջանավարտներ Բալասան Դարբինյանը, Սեդա Օհանյանը, Լիանա Մալաքյանը, Աննա Եդիգարյանը, Քնարիկ Մարգարյանը, հեռակա բաժնի ուսանողներ Շուշան Գրիգորյանը /4-րդ կուրս/, Հրայր Մխիթարյանը /2-րդ կուրս/, Մյասնիկ Չիչոյանը /2-րդ կուրս/ և Էրիկ Ալավերդյանը /առկա բաժնի 1-ին կուրս/:

Մոցարտ, Ռախմանինով, Ջոպլին, Արամ Սաթյան. արտասահմանյան և հայ ճանաչված կոմպոզիտորների սիրված դաշնամուրային ստեղծագործություններից մինչև Սերգեյ Եսենինի, Վահան Տերյանի, Պետրոս Դուրյանի, Մարո Մարգարյանի, Արամայիս Սահակյանի խոսքերով գրված երգերի կատարումներ. ավելի քան մեկ ժամ դասախոսը և ուսանողները հիացրին ունկնդիրներին՝ նրանց տանելով դասական երաժշտության ու երգարվեստի հրաշք աշխարհը, մատուցելով մասնագիտական հետաքրքիր մոտեցումներ ու գեղեցիկ կատարումներ:

«Համերգի ընթացքում մտորում էի՝ ստեղծագործողին որքան ժամանակահատված է պետք, որպեսզի նա ներկայացնի իր ողջ գործունեությունը՝ ստեղծագործական, մանկավարժական, թե արվեստագիտական. Լիլի Խաչատրյանը այս ժամանակահատվածում ներկայացրեց իրեն՝ ինչպես ինքը կար, ինչպես իրեն ամեն օր տեսնում ենք՝ ուրախ, կենսառատ, ժպիտով, իսկական մտավորականի կեցվածքով»,-ասաց ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը՝ ընդգծելով, որ 55 տարվա մանկավարժական գործունեության ընթացքում Լիլի Խաչատրյանը կրթել է բազմաթիվ սերունդների՝ միաժամանակ պահպանելով հետադարձ կապը շրջանավարտների հետ, որի վառ վկայությունն էր նաև ներկա համերգային ծրագիրը:

Դեկանը ներկայացրեց՝ Լիլի Խաչատրյանը իսկական արվեստագետ է, նաև լավ անհատ, որի ծաղկաբույլը ձևավորում է թե՛ երաժիշտ կատարողը, թե՛ ստեղծագործող երաժիշտը: Նա շնորհավորեց վերջինիս համերգին ներկա դասախոսական կազմին ու հյուրերին երաժշտական գեղեցիկ տոն պարգևելու և այդ տոնի բերկրանքը շարունակաբար վայելելու հնարավորության համար:

Մոցարտի հայտնի ու սիրված «Ռոնդո» լյա մաժոր սոնատի մի հատվածի հրաշալի մատուցմամբ Լիլի Խաչատրյանը ազդարարեց ուսումնական տարվա ավարտը՝ նոր համերգային ծրագրերի ներկայացման ակնկալիքով:

Սիլվա Ասրյան

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Այս երազանքն ինձ համար կրկնակի արժեք ուներ

Մանկության տարիներին, երբ աշխարհն ինձ համար դեռևս պատմությունների ու հեքիաթների գունեղ ու խորհրդավոր մի տիեզերք էր, հոգուս խորքում արմատավորվեց մի նպատակ, որը ժամանակի ընթացքում վերաճեց կայուն համոզմունքի և կենսակերպի: Իմ տեսլականն էր դառնալ բանասեր՝ մարդ, որն ընկալում է բառի խորքային ուժն ու լեզվի փառունակ գեղեցկությունը:

Այդ երազանքն ինձ համար կրկնակի արժեք ուներ, քանի որ այն նաև մորս նվիրական իղձն էր: Այդ հանգամանքն իմ ընտրած ճանապարհն առավել պարտավորեցնող էր դարձնում: Այսօր, որպես Բանասիրական ֆակուլտետի ուսանող, ես գիտակցում եմ, որ մարմնավորում եմ մեր ընդհանուր նպատակը, ինչն իմ ուղին դարձնում է առավել պատասխանատու, իմաստավորված և արժեքավոր:

Ինձ համար այս ֆակուլտետը սոսկ լսարանների, քննությունների ու դասախոսությունների մասին չէ. սա մի միջավայր է, որտեղ ստանձնում ենք մեր մեծերի ավանդած լուսավոր ժառանգությունը շարունակելու և անաղարտ պահելու վեհ առաքելությունը:

Այս ճանապարհին ամենամեծ ձեռքբերումներից մեկը մեր ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմն է՝ գիտության փարոսներ, որոնք լուսավորում են ուսանողի դեռևս անփորձ ու որոնումներով լեցուն ճանապարհը: Առանձնահատուկ ուզում եմ ընդգծել նրանց մշտական աջակցությունը, մարդկային ջերմությունն ու հոգատարությունը: Մեր դասախոսները պատրաստակամորեն լսում են յուրաքանչյուրիս ձայնը, քաջալերում ստեղծագործական միտքն ու երբեք չեն խնայում իրենց ժամանակն ու էներգիան՝ մեզ ուղղորդելու, օգնելու և կատարելագործելու համար:

Որպես երկրորդ կուրսի ուսանող՝ ավելի եմ զգում, թե ինչպես է մանկությանս երազանքն աստիճանաբար վերածվում գիտակցված, հասուն գործունեության: Բանասիրական ֆակուլտետն ինձ տվեց ավելին, քան պարզապես կրթություն. այն ինձ տվեց համախոհների մեծ ընտանիք, գիտական ձգտումներ և ապագայի հստակ տեսլական:

Պարույր Սևակի դիպուկ բնորոշմամբ՝ «Մենք մեր լեզվով ենք միայն լինելի», և իմ հաստատուն նպատակն է լինել այդ «լինելիության» արժանի կրողը, պահապանն ու տարածողը: Սա մի ճանապարհ է, որտեղ իմ անձնական նպատակները, մայրական երազանքն ու գիտական հավակնությունները միահյուսվում են ազգային արժեքներին՝ օրեցօր կերտելով ապագա բանասերի իմ կերպարը:

Մայա Ջամալյան
Բանասիրական ֆակուլտետի
2-րդ կուրս

Տաղանդ, պայքար և մեծ նպատակներ

ՀՊՄՀ լրագրության բաժնի ուսանող Էլեն Պետրոսյանը, որ մասնագիտանում է մարզական լրագրության ոլորտում, առցանց հարցազրույց է ունեցել հայտնի ֆուտբոլիստ Յուսուֆ Օտուբանջոյի հետ:

Ժամանակակից ֆուտբոլում հաջողության հասնելը պահանջում է ոչ միայն բնական տաղանդ, այլև մեծ աշխատասիրություն, ուժեղ կամք և նպատակասլացություն: Մեր զրուցակիցը՝ Յուսուֆ Օտուբանջոն, պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ է, որը հանդես է եկել հայկական առաջատար ակումբներում՝ Փյունիկում և Արարատ Արմենիայում, իսկ ներկայումս իր կարիերան շարունակում է Ուզբեկստանում՝ փորձելով նվաճել նոր բարձունքներ միջազգային ասպարեզում:

Նրա խոսքով՝ ֆուտբոլի հանդեպ սերը ձևավորվել է դեռ վաղ տարիքից: Ընտանիքը կարևոր դեր է ունեցել այդ ճանապարհին. եղբայրներն արդեն զբաղվում էին ֆուտբոլով, և հենց նրանց օրինակով էլ նա առաջին քայլերն է արել խաղադաշտում: Սակայն ժամանակի ընթացքում նա ձևավորել է իր անհատական խաղաոճը:

Մանկության տարիներին նրա վրա մեծ ազդեցություն են ունեցել լեգենդար ֆուտբոլիստներ Ռոնալդինյոն և Զեյ-Զեյ Օկոչան, որոնց տեխնիկական վարպետությունն ու ստեղծագործ խաղը դարձել են նրա ոգեշնչման աղբյուրը:

Իր կարիերայի ամենահիշարժան պահը նա համարում է մինչև 17 տարեկանների աշխարհի առաջնության մասնակցությունը Նիգերիայի հավաքականի կազմում: Այդ մակարդակում խաղալը, ինչպես ինքն է նշում, պահանջում է մեծ էներգիա, բարձր պատրաստվածություն և տաղանդ, որը պետք է մշտապես ապացուցել խաղադաշտում:

Սակայն ճանապարհը հեշտ չի եղել: Առաջին անգամ Ավստրիա տեղափոխվելիս նա բախվել է կլիմայական լուրջ դժվարությունների. ցուրտ եղանակը դարձել է իրական փորձություն: Չնայած դրան՝ նա չի հանձնվել: Հիշելով իր նպատակները՝ նա գտել է հաղթահարման իր ձևերը՝ պահպանելով ջերմությունը և հարմարվելով նոր պայմաններին:

Կարևոր խաղերից առաջ նրա պատրաստվածությունն ընդգրկում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական փուլեր: Նա վայելում է երաժշտություն, որն օգնում է կենտրոնանալ, ինչպես նաև խաղից մեկ օր առաջ մնում է ակումբի մարզաբազայում: Խաղի օրը նա սահմանափակում է արտաքին շփումները՝ խուսափելով շեղումներից և լիովին կենտրոնանալով խաղի վրա:

Երիտասարդ ֆուտբոլիստներին նա խորհուրդ է տալիս լինել կենտրոնացած և աշխատել իրենց ուժեղ կողմերի զարգացման վրա: Մեր զրուցակցի համոզմամբ՝ յուրաքանչյուր խաղացող պետք է բացահայտի իր առավելությունները և մշտապես կատարելագործի դրանք՝ թե՛ մարզումների, թե՛ խաղերի ընթացքում:

Խոսելով իր կարիերայի ընթացքում կարևոր մարդկանց մասին՝ նա առանձնացնում է Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանին, ում հետ երկար ժամանակ աշխատել է Փյունիկում, և ում հետ կապում է իր լավագույն հիշողությունների մի մասը:

Այս պատմությունը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ ֆուտբոլը ոչ միայն խաղ է, այլև կյանքի դպրոց, որտեղ հաղթում են նրանք, ովքեր չեն վախենում դժվարություններից և պատրաստ են անդադար աշխատել իրենց երազանքներն իրականացնելու համար:

Ստորև ներկայացնում ենք հարցազրույցը ֆուտբոլիստի հետ:

-Ի՞նչն էր, որը ձեզ ոգեշնչեց սկսել ֆուտբոլ խաղալ, և ո՞վ է եղել ձեր մանկության մարզական կուռքը:

-Ֆուտբոլ խաղալը տաղանդ էր, որը բացահայտվեց դեռ փոքր տարիքից, որովհետև իմ եղբայրները խաղում էին, մինչ ես կսկսեի իմ քայլերը: Իմ կուռքերն են Ռոնալդինյոն և Զեյ-Զեյ Օկոչան:

-Ձեր կարիերայում ո՞ր խաղն եք համարում ամենահիշարժանը և ինչո՞ւ:

-Ամենահիշարժան խաղը եղել է Նիգերիայի մինչև 17 տարեկանների հավաքականի կազմում՝ ՖԻՖԱ-ի աշխարհի առաջնությունում խաղալը: Ազգային հավաքականում խաղալը պահանջում է մեծ էներգիա և տաղանդ:

-Ի՞նչ դժվարությունների եք հանդիպել ձեր անցած ճանապարհին և ինչպե՞ս եք հաղթահարել դրանք:

-Առաջին անգամ էր, որ Ավստրիայում էի, բավականին ցուրտ էր, բայց երբ հիշում էի, թե ինչու եմ այնտեղ, փորձում էի մրգային թեյ գտնել և միշտ տաք մնալ:

-Ինչպե՞ս եք պատրաստվում կարևոր խաղերից առաջ՝ ֆիզիկապես և հոգեբանորեն:

-Խաղից առաջ ես լսում եմ լավ երաժշտություն, նաև խաղից մեկ օր առաջ մնում եմ մարզաբազայում, դա շատ է օգնում ինձ, խաղի օրը չեմ սիրում շատ զանգեր ընդունել, որպեսզի չշեղվեմ:

-Ի՞նչ խորհուրդ կտաք պատանի ֆուտբոլիստներին, որոնք ուզում են հասնել բարձր մակարդակի:

-Իմ խորհուրդը երիտասարդ խաղացողներին՝ կենտրոնացած եղեք և միշտ աշխատեք ձեր ուժեղ կողմերի վրա թե՛ մարզումների, թե՛ խաղերի ընթացքում: Փորձեք գտնել ձեր ուժը և շարունակ զարգացնել այն:

-Ո՞ր մարզիչն է ամենամեծ ազդեցությունն ունեցել ձեր անհատական զարգացման վրա և ինչպե՞ս:

-Մելիքյան, որովհետև նրա գլխավորությամբ ավելի երկար եմ խաղացել և միասին շատ լավ հիշողություններ ունենք Փյունիկում:

Էլեն Պետրոսյան
Կուլտուրայի ֆակուլտետի
Լրագրության բաժին, 1-ին կուրս

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ